ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2026թ. **N -------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ Հ. 71 ՇԵՆՔԻ Հ. 54 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Բաբաջանյան փողոց հ. 71 շենքի հ.54 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Կարեն Նորայրի Պողոսյանին, Սաթենիկ Մարատի Գևորգյանին, Սյուզաննա Կարոլինա Կարենի Պողոսյանին և Նորիկ Կարենի Պողոսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ Հ. 71 ՇԵՆՔԻ Հ. 54 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Բաբաջանյան փողոց հ. 71 շենքի հ.54 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Կարեն Նորայրի Պողոսյանին, Սաթենիկ Մարատի Գևորգյանին, Սյուզաննա Կարոլինա Կարենի Պողոսյանին և Նորիկ Կարենի Պողոսյանին:

Բաբաջանյան փողոցի հ.71 շենքի հ.54 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.12.2014թ. հ.20122014-01-0245 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

1988թ. ք.Երևան, Օրջոնիկիձե 13 /ներկայիս Արշակունյաց պողոտա/ հասցեում գտնվող շենքը, որտեղ բնակվել է դիմողը իր ընտանիքի հետ /ծնողների և նախկին կնոջ/, Երքաղսովետի գործկոմի կողմից ճանաչվել է վթարային, որոշվել է այն քանդել և տեղում կառուցել նորը: Դիմողի ընտանիքին ժամանակավորապես բնակվելու համար հատկացվել է ք.Երևան, Բ-1 թաղամաս, 37 շենք, 54 բնակարանը /նոր հասցեն Բաբաջանյան 71, 54 բնակարան/՝ մինչև նոր շենքի կառուցման ավարտը: 23.02.1990թ. Օրջոնիկիձե շրջսովետի կոմունալ և բարեկարգման վարչության իրացման գծով ավագ ինժեներներ Գրիգորյանի և Վարդանյանի /մի կողմից/ և դիմողի հոր՝ Ն.Պողոսյանի /մյուս կողմից/ միջև կնքվել է պայմանագիր: Դիմողի ընտանիքը ազատել է Օրջոնիկիձե հասցեի բնակարանը և տեղափոխվել է Բաբաջանյան 71 հասցե՝ մինչև նոր կառուցվելիք շենքի շինարարության ավարտը: Սակայն ըստ բնակչի կողմից ներկայացված տեղեկատվության, նոր շենք չի կառուցվել և դիմողը ընտանիքի հետ 1990թ. առ այսօր բնակվում է քննարկվող բնակարանում:

Դիմողը քննարկվող բնակարանում բնակվում է իր նոր ընտանիքի՝ կնոջ և երկու երեխաների հետ /հիմք համատիրության տեղեկանքը և հարևանների հայտարարությունները/, իսկ նախկին կինը նոտարական հայտարարությամբ հրաժարվել է քննարկվող բնակարանի իր իրավունքներից:

Ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի՝ Կարեն Պողոսյանը կնոջ՝ Սաթենիկ Գևորգյանի, երեխաների՝ Սյուզաննա և Նորիկ Պողոսյանների հետ հաշվառված են Բաբաջանյան փողոց հ. 71 շենքի 54 բնակարանում:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացիներ Կարեն Պողոսյանի, Սաթենիկ Գևորգյանի, Սյուզաննա և Նորիկ Պողոսյանների անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջիններիս կողմից ՀՀ տարածքում վերջին հինգ տարիների

ընթացքում կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Պողոսյանը 20 տարի և ավել բնակվում է քննարկվող բնակարանում՝ իր ընտանիքի հետ միասին, բարեխղճորեն տիրապետում և տնօրինում գույքը, կատարում բոլոր պարտադիր վճարները, իսկ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ